Հավելված N 439
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) անասնաբուծության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 23-32.15-Ղ3-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Էկոնոմիկայի նախարարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության Բաժինների պետերը:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության Բաժինների պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. կազմակերպում է հանրապետության անասնաբուծության առանձին ճյուղերի, այդ թվում՝ ձկնաբուծության և մեղվաբուծության իրավիճակի վերլուծության ու առաջարկությունների ներկայացման, դրանց զարգացմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների մշակման և իրականացմանն աջակցելու աշխատանքները,
2. կազմակերպում է անասնաբուծության, ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության աշխատանքները,
3. կազմակերպում է անասնաբուծությամբ, ձկնաբուծությամբ և մեղվաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին և գյուղացիական տնտեսություններին մասնագիտական խորհրդատվության տրամադրման աշխատանքները,
4. կազմակերպում է գյուղատնտեսական կենդանիների բոնիտավորման և տոհմային հաշվառման գործընթացներին աջակցության, գյուղատնտեսական կենդանիների տոհմա-սելիկցիոն աշխատանքների կազմակերպման կարգերի և ուղեցույցների մշակման աշխատանքները,
5. կազմակերպում է գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, սեռահասակային խմբերի օպերատիվ տվյալների հավաքագրման, գլխաքանակի շարժի վերլուծման և ամփոփման, կուտակված կերերի ծավալների հիման վրա կոպիտ, հյութալի և խտացրած կերերի հաշվեկշիռների կազմման աշխատանքների իրականացումը,
6. կազմակերպում է հանրապետությունում անասնաբուծական մթերքների և ձկան արտադրության ծավալների կանխատեսման, փաստացի տվյալների վերլուծման

աշխատանքները,
7. մասնակցում է բնագավառներին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման ու քննարկման գործընթացներին,
8. կազմակերպում է ֆիզիկական և իրավաբանական անձանց նամակների, դիմումների և բողոքների քննարկման ու իրավասության սահմաններում բարձրացված հարցերի լուծումն ապահովող առաջարկությունների ներկայացման աշխատանքների իրականացումը,
9. կազմակերպում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումների և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների հետ համագործակցությանն ուղղված աշխատանքները,
10. կազմակերպում է Վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման աշխատանքները:

Իրավունքները՝

• տեղական ինքնակառավարման մարմիններից, շահագրգիռ այլ մարմիններից ստանալ տեղեկատվություն հանրապետության անասնաբուծության առանձին ճյուղերի, այդ թվում՝ ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտների իրավիճակի վերաբերյալ,
• ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներից ստանալ տեղեկատվություն և տվյալներ անասնաբուծության, ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների մասին,
• տեղական ինքնակառավարման մարմիններից, ՀՀ վիճակագրական կոմիտեից ստանալ համապատասխան տեղեկատվություն անասնաբուծությամբ, ձկնաբուծությամբ և մեղվաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններին և գյուղացիական տնտեսությունների անասնագլխաքանակի, թվաքանակի վերաբերյալ,
• տեղական ինքնակառավարման մարմիններից, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից, տնտեսվարող սուբյեկտներից ստանալ տվյալներ գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, սեռահասակային խմբերի օպերատիվ տվյալների, գլխաքանակի շարժի, կուտակված կերերի ծավալների վերաբերյալ,
• տեղական ինքնակառավարման մարմիններից, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից ստանալ հանրապետությունում անասնաբուծական մթերքների և ձկան արտադրության ծավալների վերաբերյալ փաստացի տվյալներ,
• պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտը համակարգող ստորաբաժանումներից և ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարողներից ստանալ առաջարկություններ անասնաբուծության, ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտների աջակցության ծրագրերի մշակման և իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ,
• մասնակցել տեղական և արտասահմանյան պետական մարմիններում և կազմակերպություններում անասնաբուծության, ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներին վերաբերող հարցերի, միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) քննարկմանը
• ստանալ կարծիքներ կամ առաջարկություններ Վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստման համար:

Պարտականությունները՝

• վերլուծել հանրապետության անասնաբուծության առանձին ճյուղերում իրավիճակի վերլուծության արդյունքները, մշակել այդ ճյուղերի զարգացմանն ուղղված ծրագրերն ու միջոցառումները, աջակցել դրանց իրականացման աշխատանքներին,

• հետևել անասնաբուծության, ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը նպաստող նոր տեխնոլոգիաների ներդրման գործընթացի իրականացմանը, ներկայացնել համապատասխան տեղեկատվություն և առաջարկություններ աշխատանքներին աջակցելու նպատակով,

• ուսումնասիրել անասնաբուծությամբ, ձկնաբուծությամբ և մեղվաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների և գյուղացիական տնտեսությունների գործունեության վերաբերյալ ընդհանուր տվյալները, անհրաժեշտության դեպքում տրամադրել մասնագիտական խորհրդատվություն,

• ստուգել գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, սեռահասակային խմբերի օպերատիվ տվյալները, գլխաքանակի շարժը, կուտակված կերերի ծավալների հիման վրա կոպիտ, հյութալի և խտացրած կերերի հաշվեկշիռների վերաբերյալ ամփոփված տվյալները,

• ուսումնասիրել հանրապետությունում անասնաբուծական մթերքների և ձկան արտադրության ծավալների փաստացի տվյալները, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե ներկայացնել եռամսյակային պարբերականությամբ ամփոփ տեղեկագրեր,

• վերլուծել անասնաբուծության, ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտների իրականացվող աջակցության ծրագրերի ընթացքի վերաբերյալ ստացված տվյալները, մշակել պետական աջակցության ծրագրեր, հետևել դրանց իրականացման ընթացքին,

• վերահսկել գյուղատնտեսական կենդանիների բոնիտավորման և տոհմային հաշվառման գործընթացներին աջակցության, գյուղատնտեսական կենդանիների տոհմա-սելիկցիոն աշխատանքների կազմակերպման կարգերի և ուղեցույցների մշակման աշխատանքները,

• ուսումնասիրել գերատեսչությունների կողմից մշակված անասնաբուծության, ձկնաբուծության և մեղվաբուծության բնագավառներին առնչվող իրավական ակտերը, ծրագրերը, հայեցակարգերը, տեխնիկական կանոնակարգերը և ստանդարտների նախագծերը, ներկայացնել առաջարկություններ անասնաբուծության բնագավառին վերաբերող հարցերի վերաբերյալ,

• ներկայացնել կարծիք կամ առաջարկություն միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակման վերաբերյալ քննարկումների ժամանակ,

• ներկայացնել կարծիք կամ առաջարկություններ տեղական և արտասահմանյան պետական մարմիններում ու կազմակերպություններում անասնաբուծության, ձկնաբուծության և մեղվաբուծության ոլորտներին վերաբերող հարցերի շուրջ

• հետևել Վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստման, աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքին:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

1	**Ուղղություն**	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնային տնտեսություն և անասնաբուժություն
2	**Ոլորտ**	Գյուղատնտեսական գիտություններ
3	**Ենթաոլորտ**	Ագրոնոմիա և անասնաբուծություն
4	**Մասնագիտություն**	Անասնաբուծություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Բողոքների բավարարում
3. Ժամանակի կառավարում
4. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
5. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
6. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: